*Համաձայնեցված է*
*ՀՀ Շրջակա միջավայրի նախարար*

________________ Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

<<___>>____________________ 2022թ.

*Համաձայնեցված է*
*ՀՀ Առողջապահության նախարար*

________________ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

<<___>>____________________ 2022թ.

*Հավելված 1, 2*
*Չարենցավան քաղաքի*
*2023 թվականի*
*բնապահպանական*
*ծրագրի*

## Չարենցավան համայնքի 2023 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

*Հավելված 1*

# ԾՐԱԳԻՐ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. ***Ծրագրի համառոտ նկարագրությունը և նպատակները.***
2. ***Ծրագրի իրականացման ժամկետները և ծախսերը.***

## 1. Ծրագրի համառոտ նկարագրությունը և նպատակները

Չարենցավան համայնքի <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ն և <<Ասկե Գրուպ>> ԲԲԸ-ն իրենց կազմում ունեն ձուլման արտադրամասեր, որոնց աշխատանքի հետևանքով շրջակա միջավայր են արտանետվում ինչպես փոշի, այնպես էլ ծանր մետաղներ պարունակող թափոններ:

Մթնոլորտում աղտոտող նյութերի բացասական ազդեցությունը կանխելու (նվազեցնելու) նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել բնապահպանական ծրագիր և հնարավորինս նվազեցնել աղտոտող նյութերի սահմանային քանակությունը, որի դեպքում նորմալ [illegible] է: Իրականացվող ծրագրի գլխավոր նպատակն այն է, որպեսզի առավելագույն չափով նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները:

Ուշադրության արժանի են նաև վտանգավոր քիմիական նյութերը, արտադրության պրոցեսում առաջացող վտանգավոր արտադրական թափոնները, ինչպես նաև մարդու կենսագործունեության հետևանքով առաջացած կենցաղային թափոնները, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը և որոնց գործածությունը պահանջում է կառավարման լուրջ մոտեցում:

Վնասակար արտանետումներն իրենց բացասական ազդեցությունն են թողնում նաև համայնքի ազգաբնակչության առողջության վրա, մասնավորապես բացասական են ազդում ծնելիության վրա, իսկ առանձին դեպքերում՝ մարդկանց օրգանիզմում առաջանում են նորագոյացություններ՝ չարորակ ուռուցքներ:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման արդյունքների շահառուները Չարենցավան համայնքի ազգաբնակչությունն է, որոնց համար ապահովվում է բարենպաստ / անվտանգ շրջակա միջավայր:

Վերոհիշյալ կազմակերպությունների կողմից արտադրության վնասակար արտանետումներից զատ 1990-ական թվականներին արդյունաբերական գոտին բնակելի գոտուց տարանջատող հատվածում կատարվել են հսկայածավալ ծառահատման աշխատանքներ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել վերականգնել անտառաշերտը:

## 2. Ծրագրի իրականացման ժամկետները և ծախսերը.

Վերը նշված կազմակերպությունների կողմից արտադրության հետ կապված վնասակար արտանետումների ազդեցությունը նվազեցնելու համար նպատակահարմար է կատարել ծառատնկման աշխատանքներ: Աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 4718820 (չորս միլիոն յոթ հարյուր տասնութ հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2023 թվականի ապրիլի 15-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում, որը կնվազեցնի մթնոլորտի աղտոտվածությունը:

Հաշվի առնելով, որ ծրագրի իրականացումը կնպաստի բնակչության առողջության պահպանման և վերականգնման հիմնախնդիրների լուծմանը, խնդրում ենք քննարկել և մեր համայնքին տրամադրել ֆինանսական միջոցներ ծրագրի իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

*Կատ.՝ ֆինանսատնտեսագիտական*
*և գնումների կազ. բաժնի պետ Գ. Աֆյան*
*(0226) 4-34-34*

*Հավելված 2*

**Չարենցավան համայնքի 2023 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Գումարը (ՀՀ դրամ) | Համամասնությունը (%) |
|---|---|---|---|
| | **ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | **4718820** | **100** |
| *1* | *Դեկորատիվ ծառերի տնկում և խնամք (գնդաձև ակացիա)* | *4718820* | *100* |
| | **Ընդամենը** | **4718820** | **100** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

*Կատ.՝ ֆինանսատնտեսագիտական և գնումների կազ. բաժնի պետ Գ. Աֆյան*
*(0226) 4-34-34*

<<Հաստատում եմ>>
Չարենցավան համայնքի ղեկավար
______________ Հ. Կ. Շահգալդյան

<<14>> 07 2022թ.

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<Չարենցավան համայնքի 2023 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները>> ծրագրի շրջանակներում դեկորատիվ ծառերի և մարգասարքերի գնման

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքատեսակի անվանումը | Տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագրությունը | Միավորի արժեքը | Չափի միավորը | Ֆինանսավորումը կատարվելու է 2023 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար Չարենցավան համայնքին տրամադրվող սուբվենցիայով նախատեսված գումարների սահմաններում 100 %, երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Քանակը | Գումարը |
| 1 | Դեկորատիվ ծառերի տնկում (գնդաձև ակացիա) | 1.5-2 մետր բարձրությամբ: Մատակարարը պատասխանատվություն է կրում ձեռքբերվող տնկիների կենսունակության, որակի և քանակի ապահովման համար: Պատվիրատուն պարտավորվում է ժամանակին և պատշաճ կերպով իրականացնել ձեռքբերվող տնկիների, ծառերի ընդունումը, խնամքի և ջրման աշխատանքները: | 39323,5 | հատ | 0 | 50 | 100 | 100 | 120 | 4718820 |
| Ընդամենը | | | | | | | | | | 4718820 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Հ. ՂԱԶԱՆՉՅԱՆ